



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Մելինե Հովսեփյան

Մանկապարտեզ՝ «Իջևան քաղաքի թիվ հինգ» մանկապարտեզ
ՀՈԱԿ

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1.....	5
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ՄՈՏ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ	5
ԳԼՈՒԽ 2.....	8
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ՄՈՏ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԱՎՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ.....	8
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	11
ՀԱԿԵԼՎԱԾՆԵՐ	12
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մանկապարտեզը կարևոր դեր է խաղում երեխաներին դպրոց նախապատրաստելու գործում: Երեխայի հետագա կրթության հաջողությունը մեծապես կախված է նրանից, թե որքան լավ և ժամանակին է երեխան պատրաստվել դպրոցին:

Դպրոցական հիմնական առարկաներից մեկը մաթեմատիկան է: Այսօրվա տեղեկատվական հասարակության մեջ մաթեմատիկան էական նշանակություն ունի գիտական և գործնական գիտելիքների և հմտությունների գրեթե բոլոր ոլորտների զարգացման համար: Մաթեմատիկական կրթությունը հնարավորություն է տալիս մարդուն կողմնորոշվել առօրյա կյանքում և նպաստում է համակողմանի զարգացած անհատականություն կրթելուն: Մանկավարժական գիտությունների համակարգում գլխավոր նպատակը բազմակողմանի զարգացած անհատականությունների դաստիարակությունն է, հետևաբար նախադպրոցական տարիքի երեխաների կրթության, դաստիարակության և զարգացման համար կարևոր է երեխաների մոտ ձևավորել նոր գիտելիքներ, որոնք նրանք չեն կարող ստանալ շրջապատող իրականությունից: Այդ կապակցությամբ նախադպրոցական տարիքի երեխաների համար ստեղծվում են հատուկ կազմակերպված պայմաններ նրանց մեջ տարրական հասկացություններ ձևավորելու համար, որոնք հանդիսանում են անձի մաթեմատիկական զարգացման հիմքը:

Այսպիսով՝ մաթեմատիկական զարգացումը որոշիչ է, քանի որ այն հանդիսանում է մաթեմատիկական մտածողության բնորոշ որակների (ձկունություն, հետևողականություն, քննադատականություն, տրամաբանություն, ռացիոնալություն) ակտիվացման և ձևավորման գործընթաց, որի շնորհիվ ձևավորվում է ինչպես տարբեր տեսակի խնդիրների լուծման ընդունակություններ, այնպես էլ նպաստում է երեխայի ճանաչողական հետաքրքրության զարգացմանը: Մանկապարտեզները, հաշվի առնելով նախադպրոցականների հետաքրքրությունը մաթեմատիկական կատեգորիաների (ծև, քանակ, ժամանակ, տարածություն) նկատմամբ, փորձում են ընդլայնել երեխաների գիտելիքները այս ոլորտում:

Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման խնդիրներին նվիրված աշխատություններ ունեն Լ.Ա. Վենգերը, Ե.Ս. Դեմինան, Ա.Ս. Լեուշինան, Զ.Ա. Միխայլովան, Ա.Ա. Ստոլյառը և այլք:

Դասավանդման մեջ արդյունավետությունը մեծապես որոշվում է ուսուցման բովանդակության և մեթոդների համապատասխանությունը երեխաների տարիքային առանձնահատկություններին, երբ երեխան սովորում է իր տարիքի համար հատուկ նյութը տեսողական-ակտիվ ձևով գործնական կամ խաղային գործողությունների հիման վրա: Հետևաբար, դիդակտիկ խաղը նախադպրոցական տարիքի երեխաների տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման անփոխարինելի միջոց է:

Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ տարրական մաթեմատիկական գիտելիքների ձևավորումն խնդիրը ակտուալ է, և դա էլ կանխորոշել է թեմայի ընտրությունը:

Հետազոտության **նպատակն** է զարգացնել նախադպրոցական տարիքի երեխաների մոտ մաթեմատիկական տարրական պատկերացումները:

Հետազոտական աշխատանքի **խնդիրներն** են՝

1. Ուսումնասիրել նախադպրոցականների մոտ մաթեմատիկական տարրական պատկերացումների ձևավորման մասին գրականությունը:
2. Բացահայտել համապատասխան մեթոդների (մասնավորապես խաղային մեթոդներ) դերը մաթեմատիկական պատկերացումների զարգացման մեջ:

Հետազոտության **վարկած**: Նախադպրոցական տարիքի երեխաների տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը հաջող կլինի, եթե.

- հաշվի են առնվում այն գործոնները, որոնք հաջողությամբ ազդում են նախադպրոցական տարիքի երեխաների տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման վրա.
- նախադպրոցական տարիքի երեխաների տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման համար օգտագործվեն մշակված և փորձարկված մեթոդներ:

ԳԼՈՒԽ 1.

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄՈՏ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Ըստ Ա.Վ. Բելոշիստայի մաթեմատիկական պատկերները հիշողության և երևակայության պատկերներ են, որոնք ստացվել են էմպիրիկ եղանակով և կապված են քանակի, չափի, տարածության, ժամանակի, երկրաչափական ձևի և թվերի հասկացությունների հետ:¹

Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ մաթեմատիկական պատկերացումների ձևավորման նպատակը ոչ միայն նախապատրաստումն է դպրոցում մաթեմատիկայի տիրապետմանը, այլ նաև երեխաների համակողմանի զարգացմանը: Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ մաթեմատիկական գիտելիքների շնորհիվ զարգանում է հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը: Երեխան մանկապարտեզում ստացած գիտելիքները երեխաները կիրառում են առօրյա կյանքում, այդ պատճառով էլ մանկավարժի խնդիրն է հետաքրքրություն առաջացնել երեխաների մոտ կրթական գործունեության նկատմամբ: Նախամաթեմատիկայի բովանդակությունը միտված է զարգացնելու երեխայի անհատականությունը՝ նրա ինտելեկտը և մտավորականությունը, ստեղծագործականությունը: Նախադպրոցական տարիքի երեխաների մաթեմատիկական պատկերացումների զարգացման հետ կապված խնդիրներն իրականացնելու համար անհրաժեշտ է այնպես կազմակերպել մանկավարժական գործընթացը, որպեսզի երեխան միաժամանակ խաղա, սովորի և զարգանա: Դրան նպաստում է նախադպրոցական տարիքի երեխաների մաթեմատիկական պատկերացումների զարգացման տարբեր միջոցների օգտագործումը: Նախադպրոցական տարիքի երեխաների մաթեմատիկական պատկերացումների ուսուցման ընթացքում օգտագործվում են տարբեր միջոցներ: Բոլոր միջոցները բաժանվում են նյութական և իդեալական: Նյութական միջոցները ներառում են դասագրքեր, ուսումնական նյութեր, դիդակտիկ նյութ, թեստային նյութ, գործիք վիզուալիզացիա, տեխնիկական ուսումնական միջոցներ, լաբորատոր

¹ Белошистая А.В. Математическое развитие ребенка в системе дошкольного и начального школьного образования (математика): Автореф. дис. ... д-рапед. Наук / А.В. Белошистая.–М., 2003.–С. 1

սարքավորումներ: Իդեալական միջոցների մեջ մտնում են բանավոր խոսքը, գրավոր խոսքը, տարբեր սիմվոլներ, տեսողական միջոցներ և այլն:

Նախադպրոցական տարիքի երեխաների տարրական մաթեմատիկական հասկացությունների ձևավորմանն ու ամրապնդման գործընթացում կիրառվում են տարբեր մեթոդներ՝ գործնական, տեսողական, բանավոր, խաղային: Գործնական մեթոդները՝ վարժություն, փորձ, արդյունավետ գործունեություն, առավել համահունչ են նախադպրոցականների տարիքային առանձնահատկություններին և մտածողության զարգացման մակարդակին: Մաթեմատիկայի դասավանդման տեսողական և բանավոր մեթոդներն ինքնուրույն չեն: Դրանք ուղեկցում են գործնական և խաղային մեթոդներին: Տեսողական ուսուցման մեթոդները ներառում են՝ առարկաների և նկարազարդումների ցուցադրություն, դիտում, ցուցադրում, աղյուսակների, մոդելների ուսումնասիրություն: Բանավոր մեթոդները ներառում են՝ պատմվածք, զրույց, բացատրություն, բանավոր դիդակտիկ խաղեր:²

Դիդակտիկական խաղերը նպաստում են գիտելիքների նոր ձևերի ձեւավորմանը, հետևաբար հանդիսանում են լավագույն տարբերակը երեխաների մոտ հիմք դնելու մաթեմատիկական գիտելիքներ:

Դիդակտիկական խաղերը իրենց բովանդակությամբ բաժանվում են հետևյալ տեսակների՝

- Ժամանակի, տարածության, առարկաների քանակի մասին պատկերացումները ամրապնդելու համար (մաթեմատիկական)
- Բառերին և նախադասություններին ծանոթանալու, խոսքի ճիշտ ձևավորման, բառապաշարի հարստացման համար (բանավոր)
- Բնության կենդանի և անկենդան օբյեկտներին և երևույթներին ծանոթանալու համար
- Գույների, մեծության, ձևի մասին պատկերացումները ամրապնդելու համար (սենսորային)
- Չայնի բարձրության, տեմբրային լսողության, ռիթմի զարգացման համար (երաժշտական)

² Микляева Н.В. Теория и технология развития математических представлений у детей: учебник / Н.В. Микляева. – М.: Академия, 2015. – 352с

- Առարկաների և նյութերի, մարդկանց մասնագետների հետ ծանոթանալու համար և այն:³

Մաթեմատիկական պատկերացումների ձևավորման համար դիդակտիկական խաղերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ խաղեր թվերոն, տարածության մեջ կողմնորոշվելու խաղեր, ժամանակի մասին պատկերացում կազմելու խաղեր, տրամաբանական մտածողության խաղեր:

Ա. Վ. Բելոշիստայան առաջարկում է օգտագործել մոդելավորումը որպես երեխաների մոտ մաթեմատիկական պատկերացումների ձևավորման և զարգացման մեթոդ: Ուսումնական գործընթացում մոդելավորումը բարենպաստ պայմաններ է ստեղծում այնպիսի մտավոր գործողությունների ձևավորման համար, ինչպիսիք են վերացականությունը, դասակարգումը, վերլուծությունը, սինթեզը, ընդհանրացումը, որն իր հերթին նպաստում է նախադպրոցական տարիքի երեխայի գիտելիքների և հմտությունների մակարդակի բարձրացմանը:⁴

Որպեսզի նախադպրոցական երեխայի մոտ զարգանա մաթեմատիկական պատկերացումները, անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միջավայր, որում երեխան խաղա, զարգանա, սովորի այնպես, որ իր մոտ տեղի ունենա մաթեմատիկական փորձի ձևավորում և կուտակում: Անհրաժեշտ է ուսուցումը դարձնել զվարճալի: Զվարճալի ուսուցման ժամանակ սրվում են այնպիսի էմոցիոնալ և մտավոր գործընթացներ, որոնք ստիպում են դիտարկել, համեմատել, քննարկել, վիճաբանել, ապացուցել կատարված գործողությունների ճշտությունը:

Այսպիսով՝ մաթեմատիկական պատկերացումների տակ մենք պետք է հասկանանք էմպիրիկ եղանակով ստացված երևակայության և հիշողության պատկերները: Նախադպրոցական տարիքում մաթեմատիկական պատկերացումների զարգացումը տեղի է ունենում կազմակերպված կրթական գործընթացում նախադպրոցականների և դաստիարակի ինքնուրույն և համատեղ գործունեության մեջ, որի նպատակն է երեխաներին ծանոթացնել քանակական, երկրաչափական, տարածական, ժամանակային հարաբերություններին՝ օգտագործելով տարբեր միջոցներ:

³ Нищева Н.В. Играйка. Игры и упражнения для формирования и развития элементарных математических представлений и речи у дошкольников/ Н.В. Нищева. –СПб.: Детство-Пресс,2009.–48

⁴ Белошистая А.В. Формирование и развитие математических способностей дошкольников: Вопросы теории и практики /А.В. Белошистая. –М.: Гуманит. изд. центр ВЛАДОС, 2003. –400с

ԳԼՈՒԽ 2.

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄՈՏ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

«Մաթեմատիկական զարգացման հետագա ուղին, երեխայի առաջխաղացման հաջողությունը այս ոլորտում մեծապես կախված է նրանից, թե ինչպես են դրված տարրական մաթեմատիկական պատկերացումները» :

Լ.Ա.Վենգեր:

Հետազոտությունը իրականացվել է միջին խմբում: Խումբը կազմված է 15 երեխաներից: Հետազոտության նպատակն է ձևավորել երեխաների մոտ տարրական մաթեմատիկական պատկերացումներ համատեղ խաղային գործունեության մեջ:

Դասի խնդիրներն են՝

- Ուսումնական: Շարունակել ամրապնդել մեկից մինչև հինգ թվերի հաշվարկը, տարբերակել և անվանել երկրաչափական պատկերները, ամրապնդել առարկաների մեծությունը տարբերակելու ունակությունը համեմատելու միջոցով, ամրապնդել տարածության մեջ կողմնորոշվելու ընդունակությունը՝ ձախ, աջ, վերև, ներքև:
- Զարգացող: Զարգացնել հիշողությունը, տրամաբանական մտածողությունը, երևակայությունը, ձեռքի նուրբ շարժիչ հմտությունները, խոսքը:
- Դաստիարակչական: Դաստիարակել հուզական արձագանք, ուրիշներին օգնելու ցանկություն:

Պարապմունքի թեման՝ «Ճանապարհորդություն դեպի Մաթեմատիկայի աշխարհ»

Ուսումնական մեթոդներ՝ խաղ և անակնկալ պահեր, պրոբլեմային իրավիճակներ, դիդակտիկ խաղեր, ցուցադրություն, զրույց, հարցեր, ընդհանրացում:

Պարապմունքի ընթացք: Պարապմունքի սկզբում դաստիարակը ողջունում է երեխաներին, հարցնում, թե ինչ է մաթեմատիկան, ասում, որ մաթեմատիկայում

մենք սովորում ենք հաշվել, տարբերել երկրաչափական պատկերները: Այնուհետև ներս է մտնում մեկը կապույտ թիկնոցով՝ մեջքին գրված հինգ: Ռաստիարակը ասում է.- «Երեխանե՛ր, մեզ մաթեմատիկայի աշխարհից հյուր է եկել այրքայազն Հինգը: Արքայազն Հինգը մեզ բերել է նվերներ (ուղղանկայուն և հինգ թերթիկ ունեցող ծաղիկ): Կարո՞ղ եք ասել, թե ինչի համար են այս նվերները: Արքայազն Հինգը մեզ հրավիրում է ճանապարհորդել դեպի Մաթեմատիկայի Աշխարհ: Մենք գնալու ենք ավտոբուսով»: Ռաստիարակը երեխաներին բաժանում է երկրաչափական պատկերներ և երեխաները նստում են իրենց երկրաչափական պատկերով աթոռին: Ռաստիարակը հարցնում է, թե ինչու են նրանք նստել հենց այդտեղ: Ռաստիարակը ասում է, որ հասել են Մաթեմատիկայի աշխարհ, տանում է երեխաներին նկարակալի մոտ, որի վրա երկրաչափական պատկերներ: Երեխաները պետք է անվանեն երկրաչափական պատկերները: Այնուհետև ասում, որ դրանցից կարելի է ստանալ տնակ և ցույց է տալիս տնակներ ուղղանկյունուց: Տնակները տարբեր չափերի են, երեխաները պետք է դրանք դասավորեն փոքրից մեծ, քանի որ մաթեմատիկայի աշխարհում ամեն ինչ դասավորվում է ըստ կարգի: (Նկարը Հավելված 1-ում)

Կատարվում է դադար ֆիզիկական վարժությունների ձևով, որից հետո դաստիարակը ասում է,-«Մաթեմատիկայի աշխարհում բացի թվերից և երկրաչափական պատկերներից ապրում են նաև կենդանիներ: Տեսե՛ք սկյուռիկը հավաքել է սնկեր, բայց բոլոր սնկերը թափվել են, մենք պետք է օգնենք նրան հավաքել սնկերը»: Ռաստիարակը ցույց է տալիս թղթից պատրաստված ծաղիկներ և հարցնում թե քանի ծաղիկ կա դաշտում: Այնուհետև երեխաները ծաղիկները պետք է հավաքեն զամբյուղների մեջ. ամեն գույնը առանձին զամբյուղի մեջ: (Նկարը Հավելված 2-ում): Այնուհետև երեխաները շարժվում են առաջ: Հատակին նկարված է թղթից գետ, որի վրա կան թվերով «քարեր»(թղթե շրջաններ): Որպեսզի ոտքեր գետի մեջ չթրջվեն երեխաները պետք է թռչեն քարերի վրայով՝ հերթականությամբ: (Նկարը Հավելված 3-ում):

Այսքանով դաստիարակը ավարտում է ճանապարհորդությունը: Կատարվում է ամփոփում: Երեխաներին տրվում է հետևյալ հարցերը՝

1. Դուր եկա՞վ մաթեմատիկայի աշխարհում:
2. Ի՞նչ արեցինք:
3. Ո՞ր առաջադրանքները դուր եկան:
4. Ո՞ր առաջադրանքն էր ամենաբարդը:

Ղասի վերլուծություն

Պարապմունքը դիտեցին և իրենց կարծիքը հայտնեցին Իջևանի թիվ հինգ մանկապարտեզի տնօրենը, փոոխտնօրենը և մեթոդիստը: Ղասից հայտնեցին կարծիքներ կատարեցին հետևյալ վերլուծությունը. -«Պարապմունքը կառուցված էր որպես հետաքրքիր խաղային գործունեություն, որի ընթացքում երեխաները կատարեցին տարբեր առաջադրանքներ: Նման գործունեությունը դրական, հուզական ֆոն ստեղծեց և պահպանեց հետաքրքրությունը ղասի ընթացքում: Պարապմունքը շատ հաջողված էր, բովանդակային և կազմակերպված, բոլոր երեխաները ներգրավված էին, մասնակցում էին ակտիվորեն: Պարապմունքի ընթացքում դաստիարակը հասավ սահմանված նպատակներին: Պարապմունքը նպաստեց երեխաների մոտ տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորմանը, զարգացմանը և յուրացմանը: Երեխաները կարողացան կատարել հաշվարկ մինչև հինգը և հետհաշվարկ: Կարողանում էին անվանել երկրաչափական պատկերները, տարբերել իրենց ձևով և գույնով: Երեխաները գիտեին չորս հիմնական գույները: Խաղերի միջոցով դաստիարակը էլ ավելի ամրապնդեց նրանց գիտելիքները:

Երեխաները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին ղասի ընթացքում տեսածի և լսածի նկատմամբ: Երեխաների արձագանքը դրական էր, նրանք առաջադրանքները կատարում էին հաճույքով, ուշադիր էին և նախաձեռնող:

Մաթեմատիկական տարրական պատկերացումների ձևավորումը թույլ կտա երեխաներին ավելի վստահորեն կողմնորոշվել իրենց շրջապատող իրականությունում ամենապարզ օրինաչափություններով և ակտիվորեն օգտագործել մաթեմատիկական գիտելիքները առօրյա կյանքում: Մաթեմատիկական պատկերացումները նախադպրոցականը պետք է յուրացնի հետևողականորեն, հավասարաչափ և համակարգված: Նախադպրոցական տարիքի երեխաներին մաթեմատիկական սիրել սովորեցնելու, ինտելեկտուալ գործունեության նկատմամբ հետաքրքրությունը պահպանելու համար անհրաժեշտ է ստեղծագործորեն և հետաքրքրությամբ մոտենալ ուսումնական գործընթացի կազմակերպմանը, օգտագործել կրթական խաղերի բազմազանությունն ու փոփոխականությունը»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ երեխաների մաթեմատիկական զարգացումը նախադպրոցական կրթության կարևոր խնդիրն է, քանի որ այն կարևոր է երեխայի մտավոր զարգացման համար, ազդում է մտավոր գործողությունների զարգացման վրա, որոնք անհրաժեշտ են շրջապատող աշխարհը հասկանալու համար: Մաթեմատիկական զարգացումը պետք է հասկանալ որպես անձի ճանաչողական գործունեության փոփոխություններ և տեղաշարժեր, որոնք տեղի են ունենում մաթեմատիկական պատկերացումների և դրա հետ կապված տրամաբանական գործողությունների ձևավորման արդյունքում:

Ուսումնասիրություններից հետո ստացված գիտելիքները կիրառելով գործնականում պարզ դարցավ, որ երեխաների մոտ մաթեմատիկական պատկերացումների զարգացման գործընթացում կա դրական միտում:

Խորհուրդ կտամ դաստիարակներին, որ երեխաների հետ ցանկացած գործունեություն կազմակերպվի ուսման նկատմամբ երեխայի դրական հուզական վերաբերմունքի հիման վրա: Խորհուրդ կտամ, որ դաստիարակը օգտագործի խաղային մեթոդներ, անակնկալի պահեր, մրցութային խաղեր, դիդակտիկ խաղեր՝ գործունեության գործընթացի նկատմամբ հետաքրքրություն ստեղծելու և պահպանելու, ինչպես նաև ցանկալի արդյունք ստանալու համար:

Հետազոտության արդյունքում հիմնավորվեց այն վարկածը, որ համապատասխան մեթոդների կիրառումը, հատուկ խաղային առաջադրանքների և վարժությունների համակարգի կանոնավոր օգտագործումը, որն ուղղված է ճանաչողական հնարավորությունների և կարողությունների զարգացմանը, ընդլայնում է նախադպրոցականների մաթեմատիկական հորիզոնները, նպաստում է մաթեմատիկական զարգացմանը, բարելավում է մաթեմատիկական պատրաստվածության որակը: Հատուկ խաղերի և վարժությունների կիրառման արդյունքում երեխաները դառնում են ավելի ակտիվ, բացի այդ խաղերը տալիս են շատ դրական հույզեր, օգնում են երեխաներին համախմբվել և ընդլայնել մաթեմատիկայի իրենց գիտելիքները:

ՀԱԿԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1



Հավելված 2



Հավելված 3



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Леушина А.М. "Обучение счёту в детском саду". -М. : Учпедиз. 1961г.стр. 17-20
2. Белошистая А.В. Математическое развитие ребенка в системе дошкольного и начального школьного образования (математика): Автореф. дис. ... д-рапед. Наук / А.В. Белошистая.–М., 2003.–С. 1
3. Микляева Н.В. Теория и технология развития математических представлений у детей: учебник / Н.В. Микляева. – М.: Академия, 2015. – 352с
4. Нищева Н.В. Играйка. Игры и упражнения для формирования и развития элементарных математических представлений и речи у дошкольников/ Н.В. Нищева. –СПб.: Детство-Пресс,2009.–48
5. Белошистая А.В. Формирование и развитие математических способностей дошкольников: Вопросы теории и практики /А.В. Белошистая. –М.: Гуманит. изд. центр ВЛАДОС, 2003. –400с